

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 16-38 (1)

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

15 մայիսի 2008 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ
- Տ. Դավթյան - ՀՀ ֆինանսների նախարար
- Ե. Զախարյան - Երևանի քաղաքապետ
- Մ. Սարգսյան - ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
- Ա. Ղազարյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Դ. Աթանեսյան - «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության նախագահ
- Գ. Սկրտչյան - «Արմենիա Թի Վի» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Գ. Արզումանյան - «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Գ. Աբրահամյան - «Դի Սի Էյ Հայաստանի ադամանդագործական ընկերություն» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
- Է. Մովսիսյան - «Մովսիսյան» բնական քարերի մշակման ձեռնարկություն» ՍՊԸ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

- Դ. Սարգսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Վ. Բարսեղյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ
- Գ. Խաչատրյան - ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար
- Ա. Շահնազարյան - ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ
- Վ. Դանիելյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Ա. Դավթյան - «Ազրոբիզնեսի զարգացման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
- Ն. Նահապետյան - «Ակադեմիկոս Ա. Լ. Մինջոյանի անվան Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի

	գլխավոր տնօրեն
Ա. Մկրտչյան	- «Ամերիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Ա. Հովեյան	- «Արպեզ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
Ա. Գևորգյան	- «Բիզնես Սուփորթ Սենթր» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Ավետիսյան	- «Բիո-քիմ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
Բ. Սեդրակյան	- «Գլաս Ուորլդ Քամփնի» ապակետարայի արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ս. Ղազարյան	- «Գոլդեն Փելես» հյուրանոց» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Փինարբասի	- «Գրանթ Տորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Միրզոյան	- «Դոլմամա» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Ղազարյան	- «Եվրոթերմ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
Թ. Հովհաննիսյան	- «Երևանկահույք» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն
Ս. Մաթևոսյան	- «Երևանի քիմիադեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն
Ա. Մկոյան	- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ն. Մամիկոնյան	- «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ս. Մաթևոսյան	- «Լիկվոր» դեղագործական ընկերություն» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Ղուկասյան	- «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Է. Սողոմոնյան	- «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
Ս. Գիշյան	- «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Գ. Գալստյան	- «Հայաստանի շինարարների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
Ց. Գևորգյան	- «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ի. Կարապետյան	- «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ֆ. Սիմոնյան	- Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն
Դ. Սուքիասյան	- «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն
Լ. Շամյան	- «Հերմես-Արտ» ՍՊԸ-ի տնօրեն
Ռ. Ծառուկյան	- «Մուլտի-Ագրո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Ռ. Շահմուրադյան	- «Շինանյութ Ներկրողների Միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Վ. Աֆյան	- «Սոլարեն» ՍՊԸ-ի տնօրեն

- Խ. Դումիկյան - «Վիլիջ Գրուպ» ՍՊԸ-ի նախագահ
- Ս. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Տ. Ջրբաշյան - «Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն» Եվրոպական Միության կողմից TACIS-ի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրի հայաստանյան տնօրեն
- Ս. Բեկիրսկի - «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Է. Քոքսշելլ - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Ա. Արաքյան - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի թարգմանիչ
- Կ. Անդրեասյան - «Ֆրստ Թրավըլ Ընդ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
- 
- Ա. Վարդանյան - Կանադա-Հայաստան նորաստեղծ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
- Ս. Վայստեյն - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն
- Ս. Կանանյան - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի տնօրենի թարգմանիչ
- Լ. Հարությունյան - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ավագ խորհրդատու
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ
- Ս. Ղոնախյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Վ. Ճուղուրյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
- Ե. Հովհաննիսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
- Ժ. Արամյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ
- Հ. Տոբտիկյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Օ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Գասպարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության

աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գործարարության աջակցման խորհրդի ՀՀ կառավարության ծրագրից բխող ռազմավարության և հետագա աշխատանքների մասին

(Տ. Սարգսյան)

2. Քննարկումներ

1. Գործարարության աջակցման խորհրդի ՀՀ կառավարության ծրագրից բխող ռազմավարության և հետագա աշխատանքների մասին

(Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն գործարարության աջակցման խորհրդի նիստում ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի խոսքը, մասնավորապես՝ նորակազմ կառավարության կողմից գործարարության աջակցման խորհրդի հետագա գործունեության կարևորման, նրա գլխավոր խնդրի՝ հանրապետությունում միջազգային մրցակցության առումով քննություն բռնող գործարար միջավայրի ձևավորման և զարգացման առաջնահերթության, այդ նպատակների իրագործման ուղիների, տարբեր ոլորտների բարեփոխումների իրականացման, կառավարության ծրագրերի իրականացմանը մասնավոր հատվածի մասնակցության ապահովման, պետության և գործարար համայնքի միջև համագործակցության խորացման և վստահության ամրապնդման, ինչպես նաև գործարարության աջակցման խորհրդի հետագա ռազմավարության և աշխատանքների արդյունավետության բարձրացման ու այլ կազմակերպչական հարցերի վերաբերյալ (ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի խոսքի ամբողջական տեքստը կցվում է):

2. Ընդունել ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ առաջիկայում գործարարության աջակցման խորհրդի

ուշադրությանն է ներկայացվելու հարկային վարչարարության կատարելագործման հայեցակարգը, միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը և, որ քննարկվելու են նաև այդ միջոցառումների իրականացման, մոնիտորինգի և վերահսկողության գործում խորհրդի ներգրավվածության և մասնակցության հարցերը:

## 2. Քննարկումներ

---

(Ա. Ղազարյան, Յ. Գևորգյան, Տ. Ջրբաշյան, Գ. Աբրահամյան, Ա. Մխիթարյան,  
Ա. Դավթյան, Տ. Սարգսյան)

3. Ընդունել ի գիտություն քննարկումների ընթացքում «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանի, «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Յ. Գևորգյանի, «Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն» Եվրոպական Միության կողմից TACIS-ի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրի հայաստանյան տնօրեն Տ. Ջրբաշյանի, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Մխիթարյանի, «Դի Սի Էյ Հայաստանի ադամանդագործական ընկերություն» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ Գ. Աբրահամյանի, «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Դավթյանի առաջարկությունները գործարարության աջակցման խորհրդի հետագա ռազմավարության, խորհրդում տնտեսության տարբեր ոլորտների բարեփոխումներին առնչվող ռազմավարական խնդիրները քննարկելու անհրաժեշտության, ստուգումները և վարչական իրավախախտումները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործման, բարեփոխումները ոչ միայն հարկային և մաքսային ոլորտներում, այլև գործարար միջավայրը կարգավորող ամբողջ դաշտում իրականացնելու հրատապության, երկրի ենթակառուցվածքների զարգացման գործում մասնավոր հատվածի ներգրավվածության և մասնակցության ապահովման, գործարարության աջակցման խորհրդում արտահանման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ առաջնահերթ քննարկումների կազմակերպման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խնդիրներին պետության կողմից հատուկ ուշադրության ցուցաբերման, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգման չափորոշիչների վերանայման, կազմակերպությունների լուծարման ընթացակարգերի հետագա պարզեցման մասին:

4. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ գործարարության որևէ ոլորտի զարգացման համար հարկային արտոնությունների տրամադրումը դրական երևույթ չէ և դրա

փոխարեն հետևողական աշխատանք է տարվելու գործարարության զարգացման հավասար պայմանների ապահովման, ազգային ծրագրերի իրականացմանը մասնավոր հատվածին ներգրավելու գրավիչ և արդյունավետ մեխանիզմների ստեղծման, հարկային, մաքսային և այլ ոլորտներում վարչարարության կատարելագործման միջոցով գործարարների կրած ծախսերի և ժամանակի էական կրճատման ուղղությամբ և, որ հետագայում հարկային դրույքաչափերի իջեցման մասին առաջարկությունները հնարավոր կլինի քննարկել, եթե երկրի համախառն ներքին արդյունքում հարկերի հավաքագրման ծավալները կհասնեն 20-25%-ի և պետական սոցիալական ծրագրերի իրականացման գործում կբարձրանա մասնավոր հատվածի պատասխանատվությունն ու նրա մասնակցությունը կունենա որոշակի բավարար մակարդակ:

5. Գործարարության աջակցման խորհրդի անդամներին և նիստի մասնակիցներին՝ երկշաբաթյա ժամկետում գործարարության աջակցման խորհրդի գործունեության ռազմավարության վերաբերյալ առարկություններն ու առաջարկությունները ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ առաջարկություններն ամրագրող ամփոփ փաստաթուղթ նախապատրաստելու և գործարարության աջակցման խորհրդի առաջիկա նիստում քննարկումներ կազմակերպելու նպատակով՝ խորհրդի հաջորդ ընդլայնված կազմով նիստում այն ներկայացնելու համար:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ,  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

S. ՍԱՐԳՍՅԱՆ